— Ցանուն Գեր. Մակար եպիսկոպոսի Բարխուդարեանց, որով կարգի աւագ լուսարար Մ. Տաճարի. Թ. 7.

— Ցանուն Ամեն. Պատրիարքին Կ. Պոլսոյ Տ. Մաղաքիա եպիսկոպոսին, որով շնորհի նմա պատիւ Արքեպիսկոպոսութեան. Թ. 15.

— Ցանուն Եղիշէ քահանայի Տ. Մանուէլեան՝ Գործակալին Վարանդայ, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական ըստ միջնորդութեան կառավարչի թեմին Արցախայ. Թ. 16.

— Օրհնութեան և հաստատութեան յանուն Նորընտիր Կրօն. Ժողովոյ Կ. Պոլսոյ. Թ. 25.

— Ցանուն Ս. Սինօդի, ընդ որում յանձնեցաւ 12000 ռուբլի կտակեալն ի Տիկին Շողակաթէ Մ. Մելիքեան Բագունեցւոյ. Թ. 25.

— Ցանուն Ս. Սինօդի, որով յանձնարարեցաւ կարգել զմինն ի միաբանից Մ. Աթոռոյ ի գանձապահ սինօդի ի տեղի Գեր. Գառնակերեան եպիսկոպոսի. Թ. 44.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.


ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

1. ԿՈՆԴԱԿ . . . . . . . . . . . . 1
2. Ժամանակի եւ կեանքի վերանորոգողը . Կ. Վ. 5
3. Մէր առ Աստուած . . . . . . . Ե. Վ. 5
4. Կանոն Թադէոսի Առաքելոյն . . . Կ. Կ. 6
5. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . . . . . . . 8

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

6. *** . . . . . . . . . Ե. Յովհաննիսեան. 11
7. Տէր Պետրոս Ա. Գետադարձ . . . Կ. Կ. 12

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

8. Կարգապահութիւնը միջնադարեան դպրոցում եւ միւս պայմանները . . . Ս. Ե. 27
9. Ժանտախտի սպառնացած վտանգը . . . 29
10. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ . . . . . . . . . . . 30

ԱԶԳԱՅԻՆ

11. Արարատի նոր տարեշրջանը . . . . . . . 31
12. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ . . . . . . . 32
    ՄԱՅՐ ԱԹՈՌ . . . . . . . . .
    ՏԱՃԿԱՀԱՅՔ . . . . . . . .

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
ՅԱՒԵԼՈՒԱԾ.
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.


## ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1897 Թ. ՅՈՒՆՈՒԱՐ.

## ՄԽԻԹԱՐԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

### ՄԱԿԱՆՈՒՆ ԿՈՉԵՑԵԱԼ ԳՈՇ

### ՆԵՐԲՈՂԵԱՆ ԱՍԱՑԵԱԼ Ի ՆՈՐ ՎԿԱՅՆ ԿՈՉԵՑԵԱԼՆ ԽՈՍՏՐՈՎ 1

Օւարճանան ժողովուրդք նմանապէս ի յիշատակ կանուխ և անազան վկայից, զի մի է հաւաքումն հեռաւորութեան ժամանակին, որ առ Տէրն մեր։* Քանզի յանցեալ և ի ներկայ ** և յապառնի այլայլի, այլ ոչ զոխրապէսն փափագ։ Վասն զի բնաւոր այսպէս, և ոչ պատահմամբ զնա ստացեալ ունիմք։ Ըստ որում ոչ հուր և ոչ սուր, և ոչ այլ ինչ ներհակ*** հատանել զնա ի զանազան կարէ ժամանակի, զի յստացողէ աղաւաղին է և արծարծին։ Նաև ոչ գիտէ ընտրել**** երբեմն իբր ճոխի և աղքատի, առն և կնոջ, մանկան և ծերոյ, կուսի և երիտասարդի. այլ զիւրն գտեալ արժանի՝ բնակէ, և ի նոսին ներգործէ։ Ապականչաւքն զաւրանայ և ի խափանիչսն սքանչելի***** լինի։ Ի վեր քան զկարիս ամբառնայ մարմնոյ, անհայր ուսուցանէ և անմայր, զմի և նեթ գիտել, որ պատճառն է բնաւից։ Խնդայ ընդ չարչարանս, մեծարէ զվիշտս, կերակրի նախատանաւք, ուրախանայ հալածանաւք։ Ճոխանայ աղքատութեամբ, բերկրի տնանկութեամբ,****** մեռանի կենդանի, յառնէ մեռեալ։ Ասէ զաշխարհ, զարշի որ ի նմա, խոկայ ի տուէ, հսկէ ի գիշերի։ Զարթուցա-

* Զ. տէր սէրն

** Զ. ներկա

*** Զ. ներընակ

**** Զ. ընդրել

***** Զ. սքանչելի

****** Զ. տնանգութեամբ

1. Տե՛ս «Արարատի» նախընթաց համարում Խոսրով Գանձակեցու վկայաբանութիւնը։ Գ. Տ. Մկ.